Թեմա՝ *«Աշակերտի բանավոր խոսքի զարգացումը մանրապատում ստեղծագործությունների միջոցով»*

Հետազոտող ուսուցիչ՝ *Քնքուշ Լևոնյան*

2022

Բովանդակություն

Ներածություն _____ 3

§ 1. Մանրապատում ստեղծագործություններ, տեսակներ, մեթոդաբանություն _____ 5

Առած, Ասացվածք _____ 5

Հանելուկ, Դարձվածք, Շուտասելուկ _____ 6

Սուտասելուկ, Խաղիկ, Խնդուկ _____ 7

§ 2. Հետազոտական աշխատանք _____ 9

Դասի պլան-կոնսպեկտ _____ 15

Եզրակացություն _____ 19

Գրականության ցանկ _____ 20

Ներածություն

Մանկական գրականությունը, լինելով ընդհանուր գրականության անբաժանելի մասը, ունի խիստ որոշակի նպատակներ ու խնդիրներ: Այն մատաղ սերնդի աշխարհայացքի ձևավորման, մտահորիզոնի ընդլայման, գեղագիտական, դաստիրակության կազմակերպման, ունակությունների ու հմտությունների բացահայտման ու զարգացման, բառապաշարի հարստացման կարևորագույն միջոցներից մեկն է, նաև պատասխանատու, որովհետև յուրաքանչյուր վրիպում ու բացթողում կարող է խաթարել երեխայի լուսավոր պատկերացումները, աղավաղել նրա լեզուն: Մանկական գրականությունը մաքրում ու ազնվացնում է երեխային, նրա առջև փռում բնության կախարդական աշխարհի բազմազան գույներն ու երանգները, թափանցում հոգու խորքերը, նրան կապում իր հող ու ջրին, դարձնում ազնիվ ու բարի: Մանկական գրականագիտության և երեխաների դաստիարակության մեջ նաև մեծ տեղ է տրվում մանրապատում ստեղծագործություններին (առած, ասացվածք, հանելուկ, դարձվածք, խաղիկ, սուտասելուկ, շուտասելուկ, խնդուկ):

Թեմայի կարևորությունը՝

Մանրապատում ստեղծագործությունները գրականության այն մասն են կազմում, որոնք ուսումնասիրելիս ուսուցիչները կա՛մ մանրամասն ներկայացնում, բացահայտում են յուրաքանչյուրի էությունը, կա՛մ անցնում են մակերեսորեն՝ ուշադրություն չհատկացնելով և մտածելով, որ ժամանակն այդպիսի բաների վրա ծախսել պետք չէ. կան ավելի կարևոր դասանյութեր, որոնց պետք է ավելի շատ ուշադրություն դարձնել, ուսումնասիրել: Մանրապատում ստեղծագործությունները միշտ եղել են աշակերտների ուշադրության կետրոնում, և նրանք սիրով, հետաքրքրությամբ են դրանք սովորել, ուսումնասիրել: Այսօր ևս աշակետներին գրավում են մանրապատում ստեղծագործությունները, ինչն էլ հուշում է, որ դրանց ուսուցիչները մեծ տեղ և ուշադրություն պետք է հատկացնեն:

Աշխատանքի նպատակը մանրապատում ստեծագործություններից յուրաքանչյուրի առաձնահատկությունների ուսումնասիրումը, վերլուծումը և տարրական դասարաններում դրանց կիրառումն ու կարևորումն է, ինչպես նաև

դրանց միջոցով աշակերտների խոսքի զարգացումը՝ ինչպես մայրենիի, այնպես էլ օտար լեզվի դասաժամերին:

Աշխատանքի խնդիրները՝

- Ուսումնասիրել թեման, բացահայտել և դուրս բերել յուրաքանչյուր ստեղծագործության առանձնահատկությունները:
- Պարզել, թե ինչով և ինչու են անհրաժեշտ մանրապատում ստեղծագործություններն ուսումնասիրել հենց տարրական դասարաններից սկսած, ինչով է այն կարևոր խոսքի զարգացման մեջ:
- Ուսումնասիրել II դասարանի «Մայրենի»-ի դասագիրքը՝ պարզելու՝ որքան հաճախ են մանրապատում ստեղծագործությունները հանդիպում դասանյութերում, դրանց վերջում, և որն է հիմնական նպատակը՝ համեմատական տանելով օտար լեզվի դասանյութերի հետ:
- Կազմել դասի օրինակելի պլան՝ հագեցած տեղեկատվական տեխնոլոգիաներով՝ հիմնական նպատակ ունենալով մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրումն ու իմաստի ընկալումը (II դասարան):

Վարկած

Համապատասխան առաջադրանքներ և մեթոդական հնարներ ընտրելով և կիրառելով՝ հնարավոր է զարգացնել տարրական դասաանների աշակերտների բանավոր խոսքը մանրապատում ստեղծագործությունների միջոցով ոչ միայն մայրենիի, այլ նաև օտար լեզվի շրջանակներում:

§ 1. Մանրապատում ստեղծագործություններ, տեսակներ, մեթոդաբանություն

Մանրապատումները փոքրածավալ ստեղծագործություններ են, որոնք չունեն ամբողջական սյուժե և մանրամասնորեն բնութագրվող կերպարներ: Ըստ ծագման՝ մանրապատում ստեղծագործությունները բաժանվում են երկու խմբի՝ *ժողովրդական* և *հեղինակային*:

Մանրապատում ստեղծագործությունները մեծ դեր են խաղում երեխաների խոսքի զարգացման ու բառապաշարի հարստացման գործում, զարգացնում են երևակայությունն ու տրամաբանական մտածողությունը, հսկայական դեր են կատարում արժեհամակարգի ձևավորման առումով:

Մայրենիի գրեթե յուրաքանչյուր դասի հետ կարելի է կիրառել մանրապատում ստեղծագործություններ՝ կապելով դասի հիմնական թեմայի հետ՝ որպես լրացուցիչ նյութեր: Դրանք պարզաբանում, առավել ցայտուն են դարձնում հիմնական բնագրի որևէ կողմը կամ խորացնում ու ամբողջացնում դրանց գլխավոր միտքը, գաղափարը [1]:

Առած

Առածները պատկերավոր այլաբանություններ են, փոքր ծավալի բանահյուսական գրական տեսակ, պարզ ու պատկերավոր, խրատական բնույթ ունեցող ասույթներ: Նրանք վերաբերում են մարդկային հարաբերություններին, ներկայացնում են ժողովրդի հոգեբանությունը, մտածողությունը, բարոյական չափանիշները, կենցաղային պայմանները, սովորույթները և այլն: Օրինակ՝ **Արջն իր ահից կգոռա** հայկական առածը ծագել է խոր հնադարում, հիաշատակվում է նաև Եղիշեի պատմության մեջ և նշանակում է, թե մարդը օրհասի ժամանակ դրսևորում է իր ներքին բոլոր ուժերը: Օրինակներ՝

Պտուղը ծառից հեռու չի ընկնում:

Տաշած քարը գետնին չի մնա:

Կու՛ժ, քեզ ասեմ, կուլա՛, դու՛ լսիր:

Ասացվածք

Ասացվածքը ժողովրդական բանավոր ստեղծագործության տեսակներից է, որը սեղմ, պատկերավոր ձևով բնութագրում է կյանքի այս կամ այն երևույթը: Ասացվածքներում իմաստալի մտքերը արտահայտվում են ուղղակի, պարզ և անմիջական ձևով: Օրինակ՝ **Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես**: Ասացվածքները արտահայտում են ժողովրդի մտածողությունն ու աշխարհայացքը, նրա ըմբռնումները կյանքի տարաբնույթ հարցերի, մարդկային հարաբերությունների և այլ հարցերի մասին: Ասացվածքները հաճախ գործածվում են մտերմիկ, առօրյա խոսքում:

Օրինակներ՝

Համեստությունը զարդարում է մարդուն:

Աշխատանքը ազնվացնում է մարդուն:

Հանելուկ

Հանելուկները պատրաստի խոսքային ձևեր են, որոնք մի քանի տողով նկարագրում են առարկան կամ երևույթը՝ առանց անունը տալու, և այդ նկարագրությունից մարդիկ գուշակում են առարկայի անունը [2]:

Տունը՝ փոքրիկ, մուտքը՝ մեծ,
Միայն ինքն է իր տան մեջ:

ծղյաովկ

Վարպետ է մեծ, բայց անուսում,
Ջուլհակ չէ, բայց ո՛նց է հյուսում:

ևմտռ

Տարրական դասարանների աշակերտները արտասովոր հետաքրքրություն են ցուցաբերում հանելուկների հանդեպ: Հետևաբար, ուսուցիչը ամենից հաճախ և ամենից շատ հենց հանելուկներ կարող է օգտագործել դասագործընթացում, որովհետև դրանցում ամեն ինչ պարզ և անմիջական է [5]: Օրինակներ՝

Դուռ ու կտուր՝ ամուր փակ,
Մեջը հուլունք՝ հուր-կրակ,
Ես դանակով կտրեցի,
Հուլունքն անուշ արեցի:

սıսղ

Քաղաքներ են՝ տուն չունեն,
Ծովեր, գետեր՝ ջուր չունեն,
Ճամփաներ են անճամփորդ,
Բարձրիկ լեռներ՝ ձյուն չունեն:

bդտմmđ

Դարձվածք

Դարձվածքը կառուցվածքով երկու և ավելի բառերի կայուն, իմաստով ամբողջական, վերաիմաստավորված այնպիսի կապակցություն է, որը խոսքում վերարտադրվում է իբրև լեզվական պատրաստի միավոր: Դարձվածքների մեջ ներգրավում են առածները, ասացվածքները, թևավոր խոսքերը և այլն [4]:

Օրինակ՝

գլուխ կոտրել – մի բանի վրա չարչարվել

ձայն տալ – կանչել

կրակի գին – թանկ

Շուտասելուկ

Շուտասելուկը ժողովրդական բանահյուսության մանկական կատակային տեսակ է, բանաձևային ասույթ: Դժվար և արագ արտաբերության պատճառով հաճախ արտասանվում է ծիծաղաշարժ աղավաղումներով: Շուտասելուկները երեխաների արտասանական օրգանները վարժեցնելու, նրանց մեջ մայրենի լեզվի հնչյունային գեղեցկության նկատմամբ զգայուն վերաբերմունք մշակելու նպատակ են հետապնդում: Օրինակներ՝

Ավելն ասաց ավելին.
-Չփափագես ավելին,
Հազար սենյակ էլ ավլես,
Չես հասնի դու ցախավելին:

Գայլը գառին ընկեր չէ,
Ընկեր է գառը գառին:
Գայլը գայլին է ընկեր,
Ընկեր չէ գայլը գառին:

Սուտասելուկ

Սուտասելուկները բավականին հաճախ են հանդիպում մանկական ստեղծագործություններում: Սուտասելուկները երեխաներին հասցնում են մեր լեզվի դիպուկությունն ու սրությունը, ըմբռնել տալիս խոսքը նպատակաուղղված ու բովանդակալից դարձնելու, յուրաքանչյուր բառի ու արտահայտության տակ որոշակի իմաստ դնելու անհրաժեշտությունը: Զարգացնում է ստեղծագործական երևակայությունը, նպաստում խոսք կառուցելու հմտությունների ձևավորմանը:

Այս թեմայով երեխաները շատ են սիրում ստեղծագործել. անսահման մեծ է նրանց երևակայությունը հումորով, սրամիտ, անմեղ ստեր հորինելու գործում:

Ուղտն ապրում է օվկիանոսում,
Նա շատ խորն է միշտ սուզվում,
Բայց սուզվելիս անընդհատ
Մոնչում է ու կանչում:

Ծառի ճյուղին երկու աթոռ
Հեզիկ-նազիկ երգ են երգում,
Մեկը ուներ անլար կիթառ,
Իսկ մյուսը՝ մեխ, կոտրած թառ:

Խաղիկ – տաղիկ

Խաղիկները գերազանցապես քառատող քնարական երգեր են տարբեր ժանրերից՝ օրորոցային, կենցաղային, աշխատանքային երգեր և այլն: Այս մանրապատումներում արտացոլվել են՝ բողոք կյանքի անարդարությունների դեմ, լավ կյանքի երազանք և այլն:

Օրինակներ՝

Էքե – բեքե,
Չարա չրքե,
Բրսկե, բետե,
Թազի, թուզի,
Աբրամ խուզի,
Ճան ջուկ,
Մե աչք խուփ:

Հարի՛, հարի՛, խնո՛ցի,
Մեջդ բարի, խնո՛ցի,
Ունկդ բարակ, խնո՛ցի,
Մեջդ կարագ, խնո՛ցի:

Խնդուկ

Չափածո կամ արձակ փոքրիկ ստեղծագործություն է, ունի զվարճալի բովանդակություն: Նման է անեկդոտի ժանրին, միայն այն տարբերությամբ, որ խնդուկները ստեղծվում են առավելապես միայն երեխաների համար՝ նրանց ծիծաղեցնելու, զվարճացնելու, մտքի լարվածությունը թուլացնելու համար [1]:

- Մա՛րկ, ի՞նչ է հոմանիշը:
- Բառ է, որ գրվում է մի ուրիշ բառի փոխարեն, որը չես կարող ճիշտ գրել:
- Մա՛մ, դպրոցում բոլորն ասում են, որ ես սուտասան եմ:
- Տղա՛ս, բայց դու նույնիսկ դպրոց չես գնում:

§ 2. Հետազոտական աշխատանք

Հետազոտության համար ընտրվել է երկրորդ դասարանի «Մայրենի»-ի դասագիրքը, հեղինակներ՝ Վ. Սարգսյան, Կ. Թորոսյան, Ս. Գրիգորյան, Հ. Խաչատրյան [3]:

Հետազոտության նպատակը մանրապատում ստեղծագործությունների կիրառումը, հաճախականությունը և կարևորությունն ուսումնասիրելն ու վերլուծելն է: Նաև կփորձենք պարզել, թե արդյոք ընտրված մանրապատում տեղծագործությունը համապատասխանում է բնագրին, գաղափարին և ինչ նպատակով է դրված հենց այդ էջում: Արդյունքները ներկայացվում են ստորև՝ աղյուսակի տեսքով (7 լայն թեմայի դասանյութեր).

Մանրապատում ստեղծ.	**Դասանյութ**	**Օրինակ**
Հանելուկ	«Իմ այս գիրքը»	Ոչ բերան ունի և ոչ էլ լեզու, Բայց զրուցում է ու քեզ հետ խոսում Եվ շատ լավ գիտի, թե ինչ ես ուզում:
	«Գիրք»	Տպարանում շարում են, Թել-ասեղով կարում են, Շապիկ ունի նա հագին, Մեր ուղեկիցն է անգին:
	«Արջն ու գիրքը»	Խոր անտառում բույն գտավ, Ողջ ձմեռը քուն մտավ: Գարուն եկավ՝ վեր կացավ, Քուրքը հագին հեռացավ:
	«Անտեսանելի գլխարկ՝ տառերից մեկի գլխին»	Ի՞նչն է, ի՞նչը. Ընձուղտի առջևում է, 9-ի վերջում:
	«Ինչպես բառերը գետն անցան»	Բաժանում եմ բառը ես, Կեսը տանում հաջորդ տող, Որ ինձ դու ճիշտ կատարես, Բառը պիտի վանկատես:

	«Երեք աղջիկների հեքիաթը»	Կարաս ունեմ մի պուճուր, Մեջը՝ երկու գույնի ջուր:
	«Հեքիաթ ծեր ձկան մասին»	Կենդանի է լուռ ու մունջ, Թե՛ պոչ ունի, թե՛ սուր դունչ, Նա դպրոց է գնում ջրում, Ջրե տառեր կարդում, գրում:
	«Որսորդ Վինի Թուխը»	Ձյունը եկավ, Դու գնացիր, Նա մնաց:
	«Իրիկուն»	Մի լավ բան կա աշխարհում՝ Գունավոր ու սիրուն. Ափսոս, տեսնում ենք նրան, Երբ քնած ենք լինում:
Ասացվածք	«Պատմվածքն ընթերցող էր փնտրում»	Շատ կարդաս, շատ բան կիմանաս:
	«Արան ու շարան»	Շատ կարդացողը հասկացող կլինի:
	«Երեք աղջիկների հեքիաթը»	Այսօրվա գործը վաղվան չեն թողնի:
	«Ծեր պապն ու թոռը»	Ծեր մարդուն պատվի՛ր, որ ծերանաս, քեզ էլ պատվեն:
Առած	«Պատմվածքն ընթերցող էր փնտրում»	Պստիկ է, բայց ճստիկ է:
	«Արան ու շարան», «Երեք աղջիկների հեքիաթը»	Ուս ուսի որ տանք, սարեր շուռ կտանք:

	«Արջն ու գիրքը»	Արջը յոթ երգ գիտի, յոթն էլ տանձի մասին:
	«Երեք աղջիկների հեքիաթը»	Ուրիշի համար փոս փորողն ինքն է ընկնում մեջը: Մոր մի օրհնանքը յոթ անեծք կքանդի:
	«Կապույտ տերևներ»	Լավ անես՝ քե՛զ կանես, վատ անես՝ քե՛զ կանես:
	«Ո՞վ է մեզնից գեղեցիկը»	Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն:
	«Հարուստն ու հովիվը»	Աղքատը հացի՛ կարոտ է, հարուստը՝ ամե՛ն բանի:
	«Տղան ու մրջյունը»	Ամռանը պառկես հովերը, ձմռանը սատկեն կովերը:
	«Մի բաց նամակ ամենքին»	Լավություն արա՛, ջու՛րը գցիր, ձուկը չիմանա, Աստված կիմանա:
	«Սուտասանը»	Շատի հետևից ընկնողը քիչ էլ կկորցնի:
	«Ինչպես է շունը մարդուն ընկեր դարձել»	Շան բնի կողքին աղվես չի ապրի:
	«Պոչատ աղվեսը»	Աղվեսն իր պոչն է վկա բերում:
Խնդրուկ	«Պատմվածքն ընթերցող էր փնտրում»	-Ի՞նչ ես անում, աղվե՛ս: -Նամակ եմ գրում նապաստակին: -Բայց դու գրել չգիտես: -Ոչի՛նչ, նապաստակն էլ

		կարդալ չգիտի:
	«Ինչպես բառերը գետն անցան»	-Արա՛, այս մի տառն ինչու՞ ես տողադարձ արել: -Իսկ ի՞նչ անեի. թղթից արդեն ցած էր ընկնում:
	«Երեք աղջիկների հեքիաթը»	Փոքրիկը բալ է ուտում, կորիզները գցում գետնին: -Աղջի՛կ ջան, կորիզները չի՛ կարելի գետնին գցել: -Մա՛մ, բա կու՞լ տամ:
	«Մայրիկի ծաղիկը»	-Ո՞վ կարող է տասը ծաղկի անուն ասել,- հարցրեց ուսուցիչը: -Մեկ մեխակ և ինը վարդ,- պատասխանեց Հայկը:
	«Հեքիաթ ծեր ձկան մասին»	-Տատիկս շատ վախկոտ է: -Ինչի՞ց իմացար: -Փողոցն անցնելիս ամուր բռնում է ձեռքս:
	«Զարմանալի են մայրիկները»	-Աչքերիդ մեջ կարդում եմ, որ սուտ ես ասում: - Բայց դուք ասում էիք, թե առանց ակնոցի չեք կարողանում կարդալ:
	«Պոչատ աղվեսը»	Ուսուցչուհին. –Ես հանձնարարել էի շարադրություն գրել աղվեսի մասին երկու էջի չափով: Իսկ դու միայն կես էջ ես գրել: -Ես գրել եմ պոչատ աղվեսի մասին:
Շուտասելուկ	«Արջն ու գիրքը»	Աչքը տնկած ծառի տանձին՝ Արջը թրմփաց քարե բարձին:

	«Երեք աղջիկների հեքիաթը»	Այծին այցի գնաց ձին, Առանց ձիու մնաց Արծվին:
	«Ո՞վ է մեզնից գեղեցիկը»	Պատուհանի բաց փեղկը պետք է փակես, փակ փեղկը պետք է բացես:
	«Փափուկ ձյուն»	Ձյուն է ձմեռ, ձյունաբուք, Ձանձրացել են ձի ու ձուկ:
Դարձվածք	«Երեք աղջիկների հեքիաթը»	Բերանը ջուր առնել Հինգ մատի պես իմանալ Աշխարհով մեկ լինել Եփած հավի ծիծաղը կգա
Տաղիկ-խաղիկ	«Երեք աղջիկների հեքիաթը»	Հուռին գնաց բանջարի, Բանջար չեղավ, խոտ եղավ, Խոտի տակին ծիտ եղավ, Ծլվլալով դուրս թռավ: Ծիտը թռավ գերանին՝ Կանաչ խոտը բերանին:
Սուտասելուկ	«Երեք աղջիկների հեքիաթը»	Ես ունեմ մի հայելի, Արմանք-զարմանք նայելի, Երբ նայում եմ ես նրան, Գլխիվայր է ամեն բան. Պիտի կանգնեմ գլխի վրա, Որ ամեն բան իր տեղը գա:

Արդյունքների ամփոփում

Ուսումնասիրելով երկրորդ դասարանի մայրենիի դասագրքի առաջին յոթ լայն թեմաների շրջանակներում ներառված բնագրերը, տեսնում ենք, որ այնտեղ ներառված են մոտավորապես տասնհինգ հանելուկ, տասնչորս առած, յոթ խնդուկ, չորսական ասացվածք, շուտասելուկ, դարձվածք և մեկական տաղիկ-խաղիկ, սուտասելուկ: Հիմնականում նկատում ենք, որ գրեթե բոլոր

մանրապատում ստեղծագործությունները, բացառությամբ մի քանիսի, առնչվում են բնագրի հետ, ավելի պատկերավոր և հասանելի դարձնում բնագրի գաղափարը: Ըստ մեզ՝ դասագրքում առկա մանրապատում ստեղծագործությունները բավարարում են չափորոշչային պահանջներին, երեխաների մոտ զարգացնում են երևակայությունը, տրամաբանությունը, սրամիտ և հետաքրքիր պատասխաններ տալու կարողությունը, նաև վերլուծական և համադրական մտածողությունը: Սակայն չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր դասի կարելի է կիրառել մանրապատում ստեղծագործություններ՝ չշեղվելով դասանյութի բուն նպատակից և բնագրի համար հետադարձ կապ ապահովելուց:



Դասի պլան

Առարկա՝ Մայրենի

Դասարան՝ II

Դասի տեսակ՝ Ամփոփման դաս

Դասի լայն թեմա՝ «Ժողովուրդն իմաստուն է»

Դասի նեղ թեմա՝ «Երեք աղջիկների հեքիաթը»

Դասի նպատակ և խնդիրներ՝

- Զարգացնել սեր, հարգանք, հետաքրքրություն հայրենիքի, հայ ժողովրդի, նրանց իմաստության և բարոյական արժեքների նկատմամբ:
- Առաջադրանքների և հարցերի կատարմամբ ամրապնդել գիտելիքները մանրապատում ստեղծագործությունների, առանձնահատկությունների վերաբերյալ:
- Դասի լիարժեք ընկալում, գաղափարի բացահայտում, կշռադատում /դերերով պատմում/:
- Խմբային աշխատանքի միջոցով ձևավորել դասընկերներին լսելու, նրանց կարծիքը հաշվի առնելու, արժևորելու կարողություններ:
- Զարգացնել հիշողությունը, երևակայությունը, ստեղծագործականությունը, տրամաբանությունը և ուշադրությունը:

Կիրառվող մեթոդներ՝ զրույց, «ԳՈՒՍ», «Քառաբաժան»

Դասի ընթացքը (ԽԻԿ)

Կազմակերպական մաս

Խթանման փուլ

Գրատախտակին ամրացնել տառերը խառնած բառեր, աշակերտներին հանձնարարել գտնել ճիշտ տարբերակը.

ո	դ	ո	ղ	ու	ժ	վ	ր	ն

ա	ս	մ	ու	ի	տ	ն

է

- Ի՞նչ է թաքնված խառնագրում:

ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԻՄԱՍՏՈՒՆ Է

- Որտեղի՞ց է այն ձեզ ծանոթ: Ինչ-որ տեղ կարդացե՞լ եք:

Իմաստի ընկալման փուլ

Դասանյութի բեմականացում, դերերով պատմում, ամփոփում «ԳՈՒՍ» մեթոդի միջոցով.

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի

Դասարանը բաժանել 4 խմբի, կատարել հետևյալ վարժությունները:

Վարժություն1.

Համապատասխանեցնել անվանումը ստեղծագործությանը:



Վարժություն 2.

ա/ Հորինել երեք հանելուկ:

բ/ Վերհիշել և ասել մեկ շուտասելուկ:

Վարժություն 3.

Հավաքել քանդված առած-ասացվածքները.

Ուշ լինի,	նա կուտի:
Ուս ուսի որ տանք,	խոսքի կարճը:
Կու՛ժ, քեզ ասեմ,	նուշ լինի:
Թոկի երկարն է լավ,	կարճ են:
Ով աշխատի,	կուլա՛, դու՛ լսիր:
Ստի ոտքերը	սարեր շուռ կտանք:

Վարժություն 4.

Նկարել և մեկնաբանել հետևյալ դարձվածքները՝ կրակի գին, քթից թռած, ձեռք մեկնել, բերանը բաց մնալ: Օրինակ՝

Կշռադատման փուլ

Ամփոփել «Քառաբաժան» մեթոդի միջոցով.

ԻՆՉԸ՞ ԻՆՁ ԴՈՒՐ ԵԿԱՎ	Ի՞ՆՉ ՆՈՐ ԲԱՆ ՍՈՎՈՐԵՑԻ
ԻՆՉԸ՞ ԻՆՁ ԴՈՒՐ ՉԵԿԱՎ	ԻՆՉԸ՞ ԿՓՈԽԵԻ ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ

Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրելով մանրապատում ստեծագործությունները և առանձնահատկությունները՝ եկանք հետևյալ եզրակացությունների.

- Մանրապատում ստեղծագործությունները չունեն ամբողջական սյուժե և մանրամասնորեն բնութագրվող կերպարներ: Այդպիսի ստեղծագործություններ են առած-ասացվածքները, հանելուկները, շուտասելուկները, սուտասելուկները և այլն:
- Մայրենիի գրեթե յուրաքանչյուր դասի հետ կարելի է կիրառել մանրապատում ստեղծագործություններ՝ կապելով դասի հիմնական թեմայի հետ՝ որպես լրացուցիչ նյութեր: Դրանք պարզաբանում, առավել ցայտուն են դարձնում հիմնական բնագրի որևէ կողմը կամ խորացնում ու ամբողջացնում դրանց գլխավոր միտքը, գաղափարը:
- Մանրապատում ստեղծագործությունները աշակերտների կյանքում ունեն ճանաչողական արժեք, նպաստում են երեխաների դիտողականության, տրամաբանության ու երևակայության զարգացմանը, ինչպես նաև ունեն ավելի շատ կրթադաստիարակչական ու գաղափարական հզոր ներուժ:
- Ուսումնասիրելով մայրենիի երկրորդ դասարանի դասագրքի յոթ լայն թեմաներ՝ նկատեցինք, որ ավելի շատ առկա են հանելուկներ և առածներ, ինչպես նաև դասագրքում ներառված գրեթե բոլոր մանրապատում ստեղծագործությունները, բացառությամբ մի քանիսի, առնչվում են բնագրի հետ, ավելի պատկերավոր և հասանելի դարձնում բնագրի գաղափարը:
- Տարաբնույթ վարժությունների միջոցով աշակերտների մոտ կարելի է ամրապնդել յուրաքանչյուր մանրապատում ստեղծագործություն առանձնահատկությունները, ինչպես նաև հետաքրքրություն և սեր առաջացնել ընթերցանության նկատմամբ:

Գրականության ցանկ

1. Ա. Բալայան, Ռ. Խաչատրյան, Մանրապատում ստեղծագործություններ, 2019թ:
2. Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի ուսուցման մեթոդիկա, 2018 թ.:
3. Վ. Սարգսյան, Ս. Գրիգորյան, Կ. Թորոսյան, Հ. Խաչատրյան, Մայրենի 2, 2017 թ.:
4. https://hy.wikipedia.org/wiki/%D4%B4%D5%A1%D6%80%D5%B1%D5%BE%D5%A1%D5%AE%D6%84
5. http://armenianhouse.org/shnorhali/hanelukner-am.html
6. https://hy.wikiquote.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AE%D5%B6%D5%A5%D6%80